ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

<<____ >> <<_____>> 2017 թվականի -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 3-րդ համաժողովի կազմակերպման նպատակով <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը հատկացնել 10 270 554 (տաս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր հիսունչորս) դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1313-Ն որոշման NN 5 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր 10,270.6 հազար (տաս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր հիսունչորս) դրամ հատկացնելու վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017թվականի
-ի N -Ն որոշման

Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.8 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)							
		ոչ ֆինանսական ցուցանիշներ				ֆինանսական ցուցանիշներ			
		առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	իննը ամիս	տարի	առաջին եռամսյակ	առաջին կիսամյակ	իննը ամիս	տարի
1. Քաղաքականության միջոցառումներ **1.1. Ծառայություններ**									
Ծրագրային դասիչը		Անվանումը Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 3-րդ համաժողովի նախապատրաստում և անցկացում Նկարագրությունը Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովը նպատակ ունի Հայաստանում իրականացնել բազմաթիվ ծրագրեր զբոսաշրջության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, ֆրանկոֆոնիայի տարածման և այլ ոլորտներում: Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցությունը ունի տարիների							
1038	ԱԾ02								

	համագործակցության հարուստ նախահիմք, միտված է տարբեր ոլորտներում փորձի և տեղեկատվության փոխանակմանը:							
Քանակական	1				0	0	0	0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)	x	x	x	x	10270.6	10270.6	10270.6	10270.6

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է բաղաբականության միջոցառումը

1038 Տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Հայ-ֆրանսիական հարաբերություններում գոյություն ունեցող համագործակցության խորացումը և արդյունավետության բարձրացումը, տեղական ինքնակառավարման , գյուղատնտեսության, ֆրանկոֆոնիայի ընդլայնման և այլ ոլորտներում փորձի և տեղեկատվության փոխանակմանը:

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)

<<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միություն

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017թվականի
-ի N -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1313-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը (բաժինը/խումբը/դասը)	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	ՀՀ 2017 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը			
1038		11.01.01.01	ԾՐԱԳԻՐ	
			Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 3-րդ համաժողովի նախապատրաստում և անցկացում	10270.6
			<u>Ծրագրի նկարագրությունը</u> Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովը նպատակ ունի Հայաստանում իրականացնել բազմաթիվ ծրագրեր զբոսաշրջության, գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, ֆրանկոֆոնիայի տարածման և այլ	

			ոլորտներում: Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցությունը ունի տարիների համագործակցության հարուստ նախահիմք, միտված է տարբեր ոլորտներում փորձի և տեղեկատվության փոխանակմանը:	
			<u>Վերջնական արդյունքի նկարագրությունը</u> Հայ-ֆրանսիական հարաբերություններում գոյություն ունեցով համագործակցության խորացումը և արդյունավետության բարձրացումը կնպաստի տեղական ինքնակառավարման , գյուղատնտեսության, ֆրանկոֆոնիայի ընդլայնման և այլ ոլորտներում փորձի և տեղեկատվության փոխանակմանը:	
			Քաղաքականության միջոցառումներ. ծառայություններ	
	ԱԾ 02		Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության 3-րդ համաժողով (զբոսաշրջություն, գյուղատնտեսություն,կրթություն և ֆրանկոֆոնիա)	10270.6
			<u>Մատուցվող ծառայությունների նկարագրությունը</u> Երկօրյա համաժողովի կազմակերպում և անցկացում՝ ՀՀ պետական մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:	
			<u>Ծառայություն մատուցողի անվանումը</u> <u><<Հայաստանի համայնքների միություն>></u> <u>իրավաբանական անձանց միություն</u>	